

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/4

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ՄԱՖ Հայփերմարքեթս էյ-էմ» ՍՊԸ 15.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը կիրառելու դեմ:

«ՄԱՖ Հայփերմարքեթս էյ-էմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգում առկա տեխնիկական խնդիրների պատճառով «ՄԱՖ Հայփերմարքեթս էյ-էմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) 2014 թ-ի հունիս ամսվա «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի» հաշվարկը (այսուհետ հաշվետվություն) հնարավորություն չի ունեցել հանձնել օրենքով սահմանված ժամկետում (21.07.2014թ.) և այն հանձնել է առաջին իսկ հնարավորության դեպքում՝ 2014 թ-ի օգոստոսի 11-ին: Մասնավորապես, առկա տեխնիկական խնդիրը հետևյալն էր.

Ընկերությունում աշխատող մի շարք օտարերկրյա քաղաքացիների կացության վկայականների ժամկետները լրացել էին, սակայն հաշվետվության հանձնման վերջնաժամկետի դրությամբ դեռևս նոր կացության քարտեր չէին տրամադրվել, իսկ էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգը 21.07.14–11.08.14 թ.թ. ժամանակահատվածում թույլ չէր տալիս գրանցել/հանձնել եկամտային հարկի հաշվարկն աշխատակիցների տվյալներում առկա վերոնշյալ սխալների պատճառով (նույնիսկ հնարավոր չէր հանձնել նախորդ հաշվետու ժամանակաշրջանների ճշտված հաշվարկներ): Առաջին իսկ հնարավորության դեպքում, երբ էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգում կատարվեցին որոշակի փոփոխություններ, ինչը հնարավորություն տվեց հաշվետվությունը հանձնել նաև վերոնշյալ սխալների առկայության դեպքում, Ընկերության կողմից հանձնվել է 2014 թ-ի նունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը (11.08.14 թ-ին):

Ընկերության հաշվառման վայրի Կենտրոնի հարկային տեսչության կողմից տրամադրված 2014 թ-ի հոկտեմբերի 9-ի դրությամբ Ընկերության հարկային մնացորդների վերաբերյալ տեղեկանքում եկամտային հարկի գծով առկա մնացորդի և Ընկերության համապատասխան տվյալների միջև առկա է անհամապատասխանություն, որն ըստ Կենտրոնի հարկային տեսչության, պայմանավորված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված 5% տուգանքի կիրառմամբ, քանի որ Ընկերության կողմից հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը ներկայացվել է 2014 թ-ի օգոստոսի 11-ին:

Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից կատարված խախտումը պայմանավորված է եղել էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգում առկա տեխնիկական խնդիրներով, որոնք, ըստ էության, վերացվել են միայն հունիս ամսվա եկամտային հարկի հաշվետվության ներկայացման վերջնաժամկետին հաջորդող 15 օրը լրանալուց հետո, Ընկերությունը խնդրում է կատարել հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ չկիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՄԱՖ Հայփերմարքեթս էյ-էմ» ՍՊԸ-ն մինչև 21.07.2014 թ-ն ընկած ժամանակահատվածում փորձել է էլեկտրոնային եղանակով ներկայացնել 2014 թ-ի հունիս ամսվա «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային

վճարի» հաշվարկը, սակայն ՀՀ ՖՆ էլեկտրոնային հաշվետվությունների համակարգում առկա տեխնիկական խնդիրների պատճառով ընկերության փորձերը ձախողվել են: Խնդիրը կայացել է նրանում, որ Ընկերությունում աշխատող մի շարք օտարերկրյա քաղաքացիների կացության վկայականների ժամկետները լրացել են և 21.07.2014 թ-ի դրությամբ կացության նոր վկայականներ դեռևս տրամադրված չեն եղել: Նման պայմաններում ՀՀ ՖՆ էլեկտրոնային հաշվետվությունների համակարգը մինչև 11.08.2014 թ-ը չի ընդունել վերոգրյալ հաշվարկը: Ընդ որում, միայն էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգում որոշակի փոփոխություններ կատարելու արդյունքում է հնարավոր եղել ներկայացնել հաշվարկը:

Արդյունքում, «ՄԱՖ Հայփերմարքեթս Էյ-Էմ» ՍՊԸ կողմից «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի» հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար Կենտրոնի ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ վերոգրյալ խնդիրների վերաբերյալ ընկերությունը բազմիցս բարձրաձայնել է թե Կենտրոնի հարկային տեսչություն, թե ՀՀ ՖՆ թեժ գիծ:

Հանձնաժողովը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտումն ընկերության կողմից կատարված լինելու հանգամանքը որոշելու համար անհրաժեշտ էր նախ պարզել, թե համապատասխան արարքը, այն է՝ հաշվետվությունը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը, կատարվել է մեղավորությամբ, թե ոչ: Այսինքն, սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտ էր նախ պարզել «ՄԱՖ Հայփերմարքեթս Էյ-Էմ» ՍՊԸ վարքագծում մեղքի առկայության փաստը և միայն վերջինիս հաստատվելու պարագայում իրավաչափ կհամարվեր համապատասխան պատասխանատվության միջոցի կիրառումը:

Քննարկվող դեպքում, ըստ էության, կատարված արարքում բացակայում է ընկերության մեղքը, քանի որ հաշվարկը սահմանված ժամկետում ներկայացվելու ընկերության փորձերը ձախողվել են ՀՀ ՖՆ էլեկտրոնային համակարգում որոշակի խնդիրների առկայության պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում խնդիրների առկայության պայմաններում, ինչի հետևանքով ընկերությունը հնարավորություն չի ունեցել օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել 2014 թ-ի հունիս ամսվա «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի» հաշվարկը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«ՄԱՖ Հայփերմարքեթս Էյ-Էմ» ՍՊԸ 15.10.2014 թ-ի գանգատը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը կիրառելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՍՅԱՆ